

СМЕХ КАК ФЕНОМЕН СОСУЩЕСТВОВАНИЯ

В. Р. Григорян

В статье автор выявляет сущность смеха как феномена на примере анализа произведения Гр. Матевосяна “Наш род клоунов”.

LAUGH AS A PHENOMENON OF EXISTENCE

V. R. Grigoryan

The author explains the importance of laugh as a phenomenon based on Matevosyan's work “Our Generation of Clowns”.

ԹՈՄԱՍ ՄԱՆԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԵՌԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Յ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր

1910-ական թթ. վերջերին Թ. Մանը մտնում է ստեղծագործական նոր հուն: Դա նախ կապված էր Առաջին համաշխարհային պատերազմի հետ, որը գրողի համար առիթ հանդիսացավ ինչպես հոգևոր վերելքի («Ապաքաղաքական մարդու խորհրդածություններ», 1918), այնպես էլ խոր հիասթափության: Դա արդյունք էր նաև ներքին, ստեղծագործական որոնումների: Նորացման ալիքը անցնում էր ողջ Եվրոպայի վրայով: Աշխարհամասի համար սկիզբ էր առնում գեղարվեստական նոր՝ մոդեռնի դարաշրջանը: Վիրջինիա Վուլֆի դիտարկումը՝ «Ամեն ինչ փոխվում է մարդկանց բնավորության մեջ 1910 թ. վերջից», վերաբերում է ողջ մշակույթին: Հրաժարվելով գեղագիտական նախկին սկզբունքներից, որոնք գլխավորապես հանգում էին էպիկական հանդարտությանը և իրականության ճշգրիտ վերարտադրությանը («Բուդդենբրոոկներ», «Նորին արքայական մեծությունը»)՝ Թոմաս Մանը ևս սկսում է ավելի ու ավելի հակվել դեպի նոր մտածողություն, իրականության առավել քննական-վերլուծական ընկալումներն ու վերարտադրությունը: «Շպենգլերի ուսմունքի մասին» (1924) հոդվածում նա խոսում է ձևավորվող գրական նոր ժանրերի՝ ինտելեկտուալ վեպի և էսսեի մասին, որոնց սկիզբը դրել են դեռևս ռոմանտիկները: Դրանք միմյանց են միավորում փիլիսոփայությունը և պոեզիան՝ վերացական մտքի մեջ լցնելով կենդանի, բաբախող արյուն: Այդպիսի գործերի շարքում Թ. Մանը տեսնում է Նիցշեի փիլիսոփայական լիրիկան, Հերման Կայզերլինգի «Փիլիսոփայի ճանապարհորդական օրագիրը», Էմստ Բերտրամի «Նիցշեն», Գունդոլֆի «Գյոթեն», Շպենգլերի, Ֆրեյդի աշխատությունները:

Թոմաս Մանի՝ 1920-ից հետո լույս տեսած գրեթե բոլոր գործերը ևս համարվում են ինտելեկտուալ (իմա՝ փիլիսոփայական) արձակի անգերազանց

դրսևորումներ: Խոսքը «Կախարդական լեռը» (1924), «Լուստան Վայմարում» (1939), «Յովսեփը և նրա եղբայրները» (1933-43), «Դոկտոր Ֆաուստուս» (1947), «Ընտրյալը» (1951) վեպերին, որոնք իբրև փիլիսոփայական վեպեր ունեն ժանրային ընդհանրություններ: Այսպես՝ դրանք բոլորն էլ աչքի են ընկնում նախ՝ բազմաշափոթյամբ, այսինքն՝ հեշտությամբ ենթարկվում են սոցիալական, դիցաբանական, պատմական, հոգեբանական և իմաստային այլ մեկնությունների, երկրորդ՝ պարունակում են գերմանական փիլիսոփայական վեպին բնորոշ դաստիարակության վեպի տարրեր, երրորդ՝ որքան էլ գաղափարներով ծանրաբեռնված, այդուհանդերձ դրանցից յուրաքանչյուրը, ի վերջո, հենվում է մեկ գլխավոր գաղափարի և այդ գաղափարը կրող հերոսի վրա: Վերջին հատկանիշը հարաբերական է: Կախված դարաշրջանի ճաշակից և պահանջներից՝ գաղափարների կամ գաղափարի վրա շեշտադրումները կարող են փոփոխվել: Ելնելով այն հանգամանքից, որ «Կախարդական լեռը», «Յովսեփը և նրա եղբայրները» և «Դոկտոր Ֆաուստուս» վեպերը գաղափարական գծերով առավել կապված են միմյանց, քանի որ բոլորն էլ, ի թիվս բազմազան այլ գաղափարների, գրեթե հավասարապես ուշադիր են մարդու, պատմության և մշակույթի հիմնահարցերի նկատմամբ, ուստի հնարավոր ենք գտնում դրանք միավորել մեկ ամբողջական եռերգության մեջ: Սակայն մանրագնին ընթերցումը ցույց է տալիս, որ վեպերից յուրաքանչյուրին, այդուհանդերձ, բնորոշ է մեկ գաղափարի շուրջ կենտրոնացումը: «Կախարդական լեռը» վեպի համար այդ գաղափարը մարդն է, այսինքն, սա վեպ է մարդու փիլիսոփայության մասին, «Յովսեփի...» համար հիմնական գաղափարը պատմությունն է, այսինքն, սա վեպ է պատմության փիլիսոփայության մասին, իսկ «Դոկտոր Ֆաուստուսը» առավելապես կողմնորոշված է դեպի մշակույթը, ուստի այն վեպ է մշակույթի փիլիսոփայության մասին: Այս եզրահանգմանն ենք գալիս՝ հաշվի առնելով ոչ միայն Թ. Մանի գրական ժառանգությունն ուսումնասիրող գիտնականների, այլև հեղինակի՝ իր ստեղծագործության մասին բազմաթիվ հրապարակումներն ու էսսեները:

Յողվածներից մեկում «Կախարդական լեռը» վեպի մասին Թ. Մանը գրում է. «Ժամանակի մասին այդ վեպի հերոսը բոլորովին էլ Յանս Կաստորպը՝ հաճելի երիտասարդը, խորամանկ պարզամիտը չէր, որի վրա փլվում է կյանքի ու մահվան, առողջության ու հիվանդության, ազատության և հաշտության ողջ դաստիարակչական դիալեկտիկան... Նրա իսկական հերոսը Homo Dei-ն է¹, մարդը, որ կրոնական խանդավառությամբ որոնում է ինքն իրեն»²: Թ. Մանը խորհուրդ է տալիս իր ընթերցողներին այդ (և ոչ միայն այդ) վեպը կարդալ երկու անգամ՝ առավել ճիշտ տպավորություն ստանալու համար:

Արտաքին պարզությամբ հանդերձ՝ սա համաշխարհային գրականության ամենաբարդ վեպերից մեկն է: Մի կողմ թողնելով վեպի առողջարանային, պատմական, դիցաբանական և այլ մեկնակետերը՝ փորձենք կենտրոնացնալ նրա փիլիսոփայական գաղափարների վրա: Դրանց դրսևորման համար Թ. Մանը ապահովում է անհրաժեշտ իմտելեկտուալ միջավայր՝ վիպական կառույցից դուրս թողնելով այն ամենը, ինչը չի նպաստում դրանց արտացոլմանը: Նախ, իրադար-

¹ Homo Dei (լատիներեն՝ Աստծո մարդ):

² **Т. Манн**, Собр. соч., т. 9, 177:

ծությունները կատարվում են շվեյցարական «Բերգհոֆ» առողջարանում, որտեղ բուժվում են թոքային հիվանդներ: Այստեղ ներկայացված է գրեթե ողջ եվրոպան. կան գերմանացիներ, ռուսներ, իսպանացիներ, իտալացիներ, անգամ մեկ հայ կա: Ավելի ճիշտ կլինի ասել, որ առողջարանը Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեի (վիպական գործողությունները սկիզբ են առնում 1907-ին և ավարտվում 1914-ին, երբ բռնկվեց պատերազմը) եվրոպական «հիվանդ» հասարակության մանրակերտն է: Արտաքին աշխարհից կտրվածությունը, միօրինակ կենսակերպը նրանց մղում է փիլիսոփայական խորհրդածությունների: Նրանք անընդհատ, ամեն ժամ կապված են կյանքի և մահվան խնդիրներին: Առողջարանը նմանվում է իսկական փորձարարական լաբորատորիայի, որտեղ փորձարկվում են գաղափարներ, կարծիքներ: Առողջարանում պատահաբար հայտնված Յանս Կաստորպը (նա յոթ օրով տեսակցության է գալիս իր հիվանդ զարմիկին, բայց ստիպված է մնալ յոթ տարի, բժիշկները նրա մոտ նույնպես հայտնաբերում են հիվանդության բացիլներ, նա նույնպես «հիվանդ է») անցնում է դաստիարակության մի քանի փուլ: Կաստորպը թեև անպատրաստ էր փիլիսոփայության խորհրդածությունների, բայց առողջարանը նրան դարձնում է իսկական փիլիսոփա: Նրա առաջին ուսուցիչը իտալացի Սետտեմբրինին է՝ եվրոպական լիբերալ մտավորականության ներկայացուցիչը: Նրա կատաղի հակառակորդն է հրեա Լեո Նաֆթան, որը պահպանողականության և միջնադարյան ինկվիզիցիայի արժեքների կրողն է: Կաստորպի համար մի նոր աշխարհ է բացում ռուս Կլավդիա Շոշան՝ զգայական սիրո և կրքերի աշխարհը: Վերջապես, թեև կարծատև, բայց կյանքի մի այլ ճշմարտություն է բերում հոլանդացի Պեպերկորը. նա ապրում է էպիկուրյան սկզբունքներով (զինի, խնջույքներ) և շատ շուտ կնքում իր մահկանացուն:

Լսելով նրանց բոլորին՝ Յանս Կաստորպը կարողանում է ճանաչել բոլորին, չտարվել վերջնականապես որևէ մեկով, միաժամանակ հասունանալ այնքան, որ կարող է ճանաչել ինքն իրեն և որոնել իդեալական Մարդուն: Թոմաս Մանի կարծիքով մարդը առեղծված է: Այդ առեղծվածը էլ ավելի է խորանում «Ձյունը» գլխում, երբ խոր երազի մեջ Յանսի վրա իջնում է մարդկային ողջ իմաստությունը՝ իբրև սրբազան Գրաալի տեսիլք:

Յանս Կաստորպը էությանը հարցախույզ հերոս է, «դիալեկտիկական մարդ», ինչպես Սոկրատեսի մասին արտահասյտվում է Ֆ.Նիցշեն: Կյանքը նրա համար անպատասխան հարցերի շղթա է: Յերոսի այդ բնավորությամբ են պայմանավորված վեպում ժամանակի և տարածության, մահվան և կյանքի, սիրո, մարմնի և հոգու մասին ընդարձակ դատողությունները, ինչպես նաև առատ երկխոսությունները, որոնց միջոցով բացահայտվում է ճշմարտությունը: Վեպն ընդհանրապես կառուցված է շոպենհաուերյան կամքի և պատկերացման երկբևեռ հակադրման սկզբունքով:

«Յուվսեփը և նրա եղբայրները» վեպում, ինչպես արդեն ասվեց, Թ. Մանը փորձում է տալ մարդկության պատմության փիլիսոփայությունը՝ այդ նպատակի համար օգտագործելով Աստվածաշնչյան միջոցով Յուվսեփի Գեղեցիկի մասին: Այդ թեման ժամանակին հետաքրքրել է նաև Վոլֆգանգ Գյոթեին և Լև Տոլստոյին³: Սակայն թեմայի ընտրությունը միայն արտաքինապես է կապված Գյոթեի և Տոլստո-

³ Տես՝ **3. 4. Գյոթե**, Բանաստեղծություն և ճշմարտություն, Ե., 1985, 144:

յի անունների հետ: Դրա համար Թ. Մանը ուներ առավել խորքային պատճառներ: Նա վեպն համարում է «ժամանակի պարտադրանք»՝ ակնարկելով, որ այն գեղագիտական-մշակութաբանական կողմերից զատ ուներ նաև քաղաքական ենթատեքստ: Բանն այն է, որ 1920-30-ական թթ. Գերմանիայում լայն տարածում ստացավ գերմանական, այսպես կոչված «նոր միֆը» (neue Mythos), որ ծիլ էր առնում գերմանական ոգու հարության մասին Ֆ. Նիցշեի գաղափարներից: «Թող ոչ մեկը չկարծի,- ժամանակին գրում էր Նիցշեն,- թե գերմանական ոգին այլևս ընդմիշտ կորցրել է իր միֆական հայրենիքը... Կգա օրը, և նա կարթնանա լուսաբացի ողջ թարմությամբ՝ վրայից թափ տալով երկար, ծանր քունը»⁴: Դրա վկայությունը ֆաշիզմի գաղափարաբան Ալ. Ռոզենբերգի «20-րդ դարի դիցաբանությունը»(1930) գիրքն էր, որի երեք մասերում հեղինակը փորձ էր անում եվրոպական մշակույթը ներկայացնել իբրև բացառապես գերմանական ցեղերի և ժողովուրդների ծառայություն, որոնց մշտապես, մանավանդ քրիստոնեության ընդունումից հետո, խանգարել են հրեաները, մասսոնականությունը և հռոմեական ազնվականությունը:

Հեղինակի կարծիքով, իր վեպում միֆը խլվել է մացիստների ձեռքից, արմատապես փոխել է իր գործառույթը և հումանիզացվել: Թոմաս Մանը համոզված է, որ մարդկային մշակույթը ոչ թե մեկ, այլ հարյուրավոր ժողովուրդների և սերունդների ստեղծագործություն է: Անգամ հրեական պատմության վրա հենվելը ընթերցողին չպետք է շփոթեցնի, հուշում է վիպասանը: «Շատերը հակված են այս վեպը համարել վեպ հրեաների մասին,- գրում է Թ. Մանը,- այդուամենայնիվ ամբողջ հրեականը այնտեղ կազմում է միայն առաջնային շերտը»⁵: Հովսեփի, առհասարակ, հրեաների պատմությունը նա չի վերցնում իբրև միակ և եզակի օրինակ: «Պատանի Հովսեփը, օրինակ, Հակոբի որդին...», - այսպես է իր պատումը սկսում Թ. Մանը՝ ոճական հնարներով ընդգծելով իր հերոսի՝ պատմական բազմաթիվ օրինակներից ընդամենը մեկը լինելու հանգամանքը: Հրեական դիցաբանությանը և պատմությանը զուգահեռ լայնորեն ներկայացվում են նաև միջագետքյանը, եգիպտականը, հունականը՝ ներմուծված առանց ժամանակային սահմանափակման: Դա երևում է նաև վեպի լեզվից: Թոմաս Մանը գործածում է ամենատարբեր լեզվական ձևեր ու մոլուշներ, հնաբանություններ՝ պատմության ասպարեզը թողած ժողովուրդների՝ խեթերի, խալդեերի, ասորիների, շումերների և աքքադների լեզվից: Վեպում կան նաև անգլերեն, ֆրանսերեն և հոլանդերեն բառաձևեր, արտահայտություններ, որոնք վեպը կապում են նոր ժամանակների հետ: Հովսեփի կերպարի մեջ նա բացահայտորեն ներմուծում է գծեր, որոնք նրան մոտեցնում են փյունիկյան Ադոնիսին և հունական Հերմեսին: Թոմաս Մանը չի էլ թաքցնում, որ ինչպես Ֆաուստը, այնպես էլ Հովսեփը, ներկայացնում են մարդկության խորհրդանշական կերպարը⁶: Վեպում առկա են մոտիվներ, որոնք Հովսեփին մոտեցնում են նաև Ոդիսևսին, Հիսուսին, Զիգֆրիդին, Ֆաուստին: Հովսեփի բարեփոխումները և շրջահայաց կառավարումը, որոնց շնորհիվ եգիպտոսը կարողանում է շրջանցել սովը և դառնալ ծաղկուն երկիր,

⁴ **Փր. Ницше**, Сочинения, т. 1, 155:

⁵ **Т. Манн**, Собр. соч, т. 9, 184:

⁶ Ն.տ., 186:

հիշեցնում են Թեոդոր Ռուզվելտի «Նոր քաղաքականությունը»: Այսինքն, Թոմաս Մանը վեպում ստեղծում է մարդկության պատմության խճանկարը՝ դրա համար շաղախ դարձնելով աստվածաշնչյան առասպելը: Նրա կարծիքով մարդկության պատմությունը անհատակ ջրհոր է, որի ամբողջական պատկերը ոչ ոք չի կարող տալ: Մարդկության պատմության խորհրդանիշը վեպում հենց Ջրհորն է, որը անընդհատ հանդիպում է վեպի էջերում և կարող է իմաստային մի քանի մեկնաբանության ենթարկվել:

Օրինակ՝

1. Անհատակ ջրհոր, իբրև մարդկային պատմության այլաբանություն:
2. Հովսեփի և առհասարակ մարդկանց ճանապարհին հանդիպող աղետների այլաբանություն:

3. Հաստատուն, անփոփոխ վիճակի այլաբանություն (ջրհորի մեջ ջուրը չի հոսում), այն մշտապես պահպանում է աստվածաշնչյան առասպելը, որտեղ կարևորը արդարության և գեղեցիկի հաղթանակն է:

4. Երկրորդ ծննդյան այլաբանություն, որը կրկնվում է բանտի դրվագում:

5. Ենթագիտակցության այլաբանություն, որտեղ մարդը հանդիպում է մահվան հետ:

Վերջապես «Դոկտոր Ֆաուստուս» վեպում Թոմաս Մանը ներկայացնում է մշակույթի հիմնախնդիրը, ավելի ճիշտ կլինի ասել, որ սա մշակույթի վեպ է: «Դոկտոր Ֆաուստուսի պատմությունը» ընդարձակ էսսեում հեղինակը ուղղակի գրում է. «...այն («Դոկտոր Ֆաուստուս» վեպը՝Ա.Ա.) մտահղացվել է իբրև վեպ մշակույթի մասին»⁷: Դրանում համոզվելու համար կարելի է պարզապես հետևել, թե վեպի վրա աշխատելիս ինչ գրքեր է կարդացել և ովքեր են շրջապատել հեղինակին՝ Ա. Էյնշտեյն, Զ. Գաուս, Հ. Բորիս, Թ. Ադոմնո, Ֆ. Վերֆել, Ա. Շյոնբերգ, Ի. Ստրավինսկի, Ա. Ռուբինշտեյն, Պ. Տիլլիխ, Մ. Հորկհեյմեր, Հ. Ման, Լ. Ֆրանկ, Լ. Ֆեյխտվանգեր, Ա. Դյոբլին, Վ. Բենյամին... կարդում է Ստիվենսոնի «Դոկտոր Ջեկիլը և միստեր Հայդը», Էշենբախի «Պարցիֆալը», Իբսենի, Ֆոնտանեի, Շթիֆտերի հասուն շրջանի գործերը, Գյոթեի, Ռուսսոյի, Լյութերի, Բեթհովենի, Ալբան Բերգի, Նիցշեի, Դոստոևսկու, Պասկալի մասին գրքեր, Շեքսպիրի պիեսները, Հոֆմանի «Մուր կատուն», Ֆաուստի մասին լեգենդի բազմաթիվ տարբերակներ, Ստրավինսկու օրագրերը, Օլդոս Հաքսլիի «Ժամանակը պետք է կանգ առնի» գիրքը, Ջոյսի «Ուլիսեսը», Հ. Բեռլիոզի «Մեմուարները», Կյերկեգորի, Բրանդեսի աշխատությունները...Նա կենտրոնացնում է հատկապես գերմանական մշակույթի վրա: Նա խոսում է գերմանական հոգու մասին՝ իբրև այդ մշակույթի ակունք-արարողի: Կիրառելով իր նախասիրած իրականության շուպենհաուերյան երկշերտության սկզբունքը՝ նա այդ հոգու մեջ տեսնում է ոչ միայն առողջություն, այլև հիվանդություն: Գերմանական բնավորության մեջ, կարծում է Թ. Մանը, առկա են խոր հակասություններ: Մի կողմից նա զգում է աշխարհի հետ առնչվելու անհրաժեշտություն, մյուս կողմից՝ վախ նրա հանդեպ: «Այդ հոգևոր կառույցին,- գրում է Թ. Մանը,- մշտապես հատուկ է եղել թափանցիկ-խեղկատակային և հեքիաթային- սարսափելի ինչ-որ բան, ինչ-որ թաքցված դեմոնականություն...»⁸: Գերմանական ոգու հենց այս հակադրության մեջ է տես-

⁷ **Т. Манн**, Собр. соч., т. 9, 227:

⁸ **Т. Манн**, Собр. соч., т. 10, 306:

նում գրողը նրա մշակույթի և պատմության ողբերգականությունը:

«Դոկտոր Ֆաուստուս» վեպը չափազանց երաժշտական է, և դա ունի իր տրամաբանությունը: Երաժշտությունը հենց այն ոլորտն է, կարծում է Թ. Մանը, որ ուղղակիորեն կապված է նախ գերմանական ոգու, ապա նաև դեմոնականության հետ (Թ. Մանը դա սովորել է Կյերկեգորից և Նիցշեից): Երաժշտական բնավորություն հաղորդելով Ֆաուստի լեգենդին՝ Թոմաս Մանը մի կողմից առարկում է Գյոթեի «Ֆաուստի» հայեցակետը, մյուս կողմից լայն հնարավորություն ստեղծում խոսելու առհասարակ գերմանական մշակույթի մասին: Այսպիսով, թեև վեպում առաջնայինը գերմանացի երգահան Ադրիան Լևերկյունի դրամատիկ կյանքի պատմությունն է, սակայն խորքում 20-րդ դարի առաջին կեսի ավանդական մշակույթից մոդեռնի անցման ցավագին իրադարձություններն են: Ադրիան Լևերկյունի երաժշտական կյանքը այն առիթն ու հիմքն են, որպեսզի վեպում լայն խոսակցություն ծավալվի պատմության, կրոնի, քաղաքատնտեսության, փիլիսոփայության, սիրո, ընտանիքի մասին: Հատկանշական է, որ Թ. Մանը հետևողականորեն պահպանում ու զարգացնում է հանճար-հիվանդություն, կյանք-արվեստ, բնություն-ոգի, աստված-սատանա երկբևեռ հակադրության մոտիվը: Այն երևան է գալիս վեպի հենց սկզբում նախ Էսմերալդա թիթեռի, ապա Լևերկյունի հոր մասին պատմություններով, որը սիրում է զբաղվել ալքիմիայով, այսինքն՝ կախարդանքով: Իբրև երգահան, Ադրիան Լևերկյունի կյանքը հրապարակ է մարդկային և դեմոնականի, ավանդական և մոդեռն արվեստի սկզբունքների բախման: Դրա բարձրակետը երգահանի և սատանայի հանդիպումն է: Վեպի՝ այդ իրադարձությունը ներկայացնող երկու գլուխներն, անկասկած, 20-րդ դարի գեղարվեստական հայտնություններից են: Սատանան Թ. Մանի մեկնաբանությամբ, գերագույն աստիճանի գերմանական բնավորություն է: Լևերկյունի գործարքը սատանայի հետ ոչ միայն մշակութաբանական ենթատեքստ ունի, այսինքն, երգահանը մերժում է Մոցարտի, Բեթհովենի, Գյոթեի արվեստի ավանդույթը և հակվում դեպի մոդեռնը, դեպի սատանան, այլև քաղաքական՝ սատանայի հետ գործակցությունը այլաբանորեն խորհրդանշում է Գերմանիայում նացիզմի հաղթանակը:

Վեպը գրելիս Թ. Մանը լայնորեն օգտվել է դարաշրջանի մասին իրական փաստերից և առանձին արվեստագետների և փիլիսոփաների, մասնավորապես Նիցշեի, Ստրավինսկու, կենսագրություններից, Շյոնբերգի, Ադոռնոյի երաժշտական նոր սկզբունքներից: Վեպի հիմքում հենց Նիցշեի կյանքի պատմությունն է՝ իբրև 20-րդ դարի ողբերգական մշակույթի խորհրդանիշ, թեև փիլիսոփայի անունը վեպում ոչ մի անգամ հիշատակված չէ:

Այսպիսով, իր երեք կարևորագույն վեպերի թեմա դարձնելով մարդու, պատմության և մշակույթի փիլիսոփայության հիմնահարցերը՝ Թոմաս Մանը ոչ միայն ընդգծում է իր գրական-գեղագիտական հայեցակարգում Մարդու, Պատմության և Մշակույթի առանձնահատուկ մշանակությունը, այլև ակնարկում եվրոպական Մտքի զարգացման կարևոր միտումներից մեկը. այն է՝ նրա առանձին տարրերի՝ փիլիսոփայության, գիտության, արվեստի, կրոնի, դիցաբանության և գրականության միավորումը նոր հաղորդակցական լեզվի մեջ, որի անունն է մշակույթ: Երևույթն, առհասարակ, բնորոշ է 20-րդ դարի կեսերի, հատկապես հետմոդեռնի գրականությանը: Օրինակ, բառացիորեն միևնույն երևույթը (այսինքն, ամեն ինչ,

ի վերջո, մշակույթին հանգեցնելը) նկատելի է նույն ժամանակներում ստեղծված մեկ այլ վիպական գլուխգործոցի՝ Հերման Հեսսեի «Հուլունքախաղում», որտեղ կարծես մանրամասնորեն կողավորված և նախանշված են եվրոպական մշակույթի ապագա լեզուն և ճանապարհները: Պատահական չէ այդ վեպի հետ «Դոկտոր Ֆաուստուսի» նմանության մասին թ. Մանի անկեղծ խոստովանությունը⁹:

ФИЛОСОФСКАЯ ТРИЛОГИЯ ТОМАСА МАННА

А. Г. Аракелян

В статье впервые делается попытка рассмотрения романов “Волшебная гора”, “Овсеп и его братья” и “Доктор Фауст” знаменитого немецкого писателя Томаса Манна в качестве одной философской трилогии, в которой первая представляет философию человека, вторая—философию истории, а третья— философию культуры.

THE THREE PHILOSOPHIC WORKS BY THOMAS MANN

A. A. Arakelyan

“The Magic Mount”, “Hovsep and his Brothers”, “Doctor Faustus”, written by the famous German writer, are being studied for the first time as works that have common philosophic approaches: the first one is the philosophy of a man, the second is the history of philosophy and the third is culture.

ԵՐԿՎՈՐՅԱԿՆԵՐԻ ՀԱՎԱՏԱԼԻՔԻ ՈՒ ՊԱՇՏԱՍՈՒՆՔԻ ՀԵՏՔԵՐՈՆ ՀԱՅՎԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՀԻՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐՈՒՄ

Լ. Խ. ՂՈՒՋՅԱՆ

Քանասիրական գիտությունների թեկնածու

Նախնադարյան ժամանակաշրջանում ապրած ցեղերի կրոնական պատկերացումների մեջ գոյություն է ունեցել նաև Երկվորյակ աստվածությունների պաշտամունք, որը համընդհանուր է եղել մարդկային պատմության այդ ժամանակաշրջանի համար և բավականաչափ վաղ է ծագել Հայկական Լեռնաշխարհում: Հիշյալ աստվածությունների պաշտամունքը Հայկական Լեռնաշխարհում ի

⁹ «Շվեյցարիայից եկան Հերման Հեսսեի «Հուլունքախաղի» երկու հատորները»: - գրում է Թոմաս Մանը,- ես մի անգամ չէ, որ ասել եմ, թե այդ արձակը մոտիկ է ինձ իբրև իմ մարմնի մաս: Հիմա տեսնելով կտավը ամբողջությամբ, ես գրեթե սարսափեցի նրա նմանությունից այն բանի հետ, ինչ համակել էր անձամբ ինձ»: Տես՝ **Т. Манн**, Собр. соч, т. 10, 249: